

УДК 614.2. (479.25)

ՀՀ առողջապահական համակարգի լիցենզավորման հիմնական տեղեկությունները

Դ.Հ. Դումանյան, Հ.Վ. Եղիազարյան, Ա.Ֆ. Սողոյան

*ՀՀ Առողջապահության նախարարություն,
Մխիթար Հերացու անվ. ԵՊԲՀ,
0001, Երևան, Արամի փող., Կառավարական շենք, 3*

Բանալի բառեր. առողջապահական համակարգ, առողջապահության կազմակերպում, լիցենզավորման գործընթաց, բնակչության բուժսպասարկում, բժշկական ծառայություններ

Լիցենզավորման խնդիրները առողջապահական համակարգում մինչ օրս պահպանում են իրենց արդիականությունը և շարունակում են մնալ գիտագործնական տարբեր բնագավառների ներկայացուցիչների ուշադրության կենտրոնում [4, 5, 7]: Դրա հետ մեկտեղ ներկայումս քիչ են ուսումնասիրված բժշկական գործունեության լիցենզավորման կազմակերպական հիմքերը համակարգային մոտեցման տեսակետից [2, 3, 6]:

Լիցենզավորման գործընթացը ՀՀ առողջապահության ոլորտում մատուցվող ծառայությունների որակի և անվտանգության ապահովման կարևորագույն գործիքն է:

Համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի [1] լիցենզավորումը՝ լիցենզիաների տրման, դրանց գործողության ժամկետի երկարաձգման, վերաձևակերպման, գործողության կասեցման և դադարեցման հետ կապված գործընթաց է:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ՀՀ առողջապահական համակարգի լիցենզավորման գործընթացի կազմակերպչական առանձնահատկությունները:

Առողջապահության ոլորտում լիցենզիաները **բարդ ընթացակարգով, անժամկետ** (բացառությամբ ՀՀ Կառավարության 281-Ն որոշմամբ տրվողների, որոնց համար սահմանված է 3 տարի) տրվող են, և նրանց համար սահմանվում են տվյալ գործունեության իրականացման համար պարտադիր պահանջներ և պայմաններ, և դրանց

պահպանման նկատմամբ իրականացվում է օրենքով սահմանված կարգով հսկողություն:

Ստորև նեկայացված են լիցենզավորման գործընթացի բնորոշ և օգտագործվող տերմինները.

- լիցենզիա՝ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն, ինչպես նաև այդ իրավունքը հաստատող պաշտոնական փաստաթուղթ,
- լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ՝ գործունեության տեսակ, որի իրականացման համար օրենքով պահանջվում է լիցենզիա,
- լիցենզավորում՝ գործընթաց՝ կապված լիցենզիաների տրման, դրանց գործողության ժամկետի երկարաձգման, վերաձևակերպման, գործողության կասեցման և դադարեցման հետ,
- լիցենզավորող մարմիններ՝ պետական մարմիններ, որոնք սույն օրենքով սահմանված կարգով իրականացնում են լիցենզավորում,
- լիցենզավորված անձ՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, կամ անհատ ձեռնարկատեր, ինչպես նաև պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին չհանդիսացող պետական կամ համայնքի հիմնարկ, որն օրենքով սահմանված կարգով ստացել է լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու լիցենզիա,
- հայտատու (դիմող)՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր, ինչպես նաև պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին չհանդիսացող պետական կամ համայնքի հիմնարկ, որը դիմել է լիցենզավորող մարմին՝ լիցենզիայի ստացման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, գործունեության իրականացման վայրի փոփոխման կամ այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու, լիցենզիայի կամ ներդիրի կրկնօրինակ ստանալու համար:

Լիցենզավորման սկզբունքները

Օրենքից բխող լիցենզավորման սկզբունքներն են՝

1) անձանց իրավունքների, օրինական շահերի, բարքերի և առողջության պաշտպանությունը, պետության պաշտպանության և անվտանգության ապահովումը.

2) Հայաստանի Հանրապետության տարածքում տնտեսական գործունեության բնագավառում միասնական քաղաքականության

ապահովումը և մեկ միասնական լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկի սահմանումը.

3) լիցենզավորման միասնական կարգի և սկզբունքների սահմանումը.

4) լիցենզավորման հրապարակայնությունը.

5) լիցենզավորման գործընթացի օրինականության ապահովումը.

6) լիցենզավորման գործընթացի պարզեցումը և թափանցիկության ապահովումը.

7) լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորման ենթակա գործունեության պահանջների խախտման համար պատասխանատվության միասնական չափանիշների և տեսակների սահմանումը:

Լիցենզավորման նպատակը

Գործունեության առանձին տեսակներով զբաղվելու լիցենզավորման նպատակներն են՝

1) սպառողների իրավունքների պաշտպանությունը,

2) զարգացող շուկայական հարաբերությունների կարգավորմանը նպաստելը,

3) ապրանքների և ծառայությունների որակի բարձրացումը,

4) անձանց կյանքին, առողջությանը, գույքին, պետության և հասարակության շահերին, բնության, մշակութային ժառանգության պահպանությանն առավել վտանգի սպառնալիքով հղի գործունեության տեսակներով զբաղվողների նկատմամբ հսկողության իրականացումը,

5) միջազգային անվտանգության ապահովման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով լիցենզավորված անձանց գործունեության նկատմամբ հսկողության իրականացումը:

ՀՀ-ում Առողջապահության նախարարության կողմից տրված 3702 գործող /1030 դադարեցված լիցենզիաների բնութագիրը /ըստ 28.11.2012 թ./:

➤ Դեղերի արտադրություն – 18/2

➤ Դեղատնային գործունեություն – 1703/685


➤ Կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացում – 1938/339

➤ Գենետիկ ինժեներիայի գործունեություն – 0/0

➤ Բժշկական միջին մասնագիտական և բարձրագույն կրթական ծրագրերի իրականացում – 43/4

ՀՀ-ում Առողջապահության նախարարության կողմից լիցենզավորված, բնակչության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող և գործող բժշկական ծառայությունների բնութագիրը՝ ըստ ՀՀ մարզերի, ներկայացված է թիվ 1 և 2 նկարներում:

Բժշկական օգնությունը և սպասարկումը, դեղատնային գործունեությունը, ինչպես նաև ստոմատոլոգիական ծառայությունը հիմնականում կենտրոնացված են Երևանում: Դեղատնային գործունեությունը 0,5-2,5 անգամ գերազանցում է բժշկական օգնությանը և ստոմատոլոգիային բոլոր մարզերում (նկ. 1):




Նկ. 1. Բժշկական ծառայությունների բաշխումը ըստ մարզերի (10 000 բնակչի հաշվով)

Ընդհանուր վիրաբուժական և սրտաբանական ծառայությունները գերիշխում են Երևանում, Վայոց ձորում, Տավուշում: Մանկաբուժական ընդհանուր գործունեությունը գերակշռում է Լոռի, Վայոց ձոր, Արագածոտն, Արարատ, Արմավիր, Սյունիք մարզերում: Ակնաբանական ծառայության առավել ցուցանիշը գրանցվում է Երևանում, Վայոց ձորում, Տավուշում, Լոռիում, Արագածոտնում մնացած մարզերի համեմատությամբ (նկ. 2):

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է բավարարել լիցենզավորման համար անհրաժեշտ պահանջներին և պայմաններին: Առողջապահության ոլորտում լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար սահմանված պահանջներն ու պայմանները կարելի է խմբավորել հետևյալ բաժիններով. անհրաժեշտ

տարածք, կառուցվածք, սարքավորումներ, կադրեր և պայմաններ, որոնք սահմանվում են ՀՀ կառավարության որոշումներով:



Նկ. 2. Բժշկական նեղ մասնագիտական ծառայությունների բաշխումը ըստ մարզերի (10 000 բնակչի հաշվով)

Տարածք՝ սեփականության, վարձակալության կամ այլ իրավունքով պետք է պատկանի հայտատուին և այդ իրավունքը պետք է գրանցված լինի ՀՀ ԿԱ առընթեր կադաստրի պետական կոմիտեի կողմից:

Բժշկական կադրերի մասնագիտական գիտելիքների ու հմտությունների ապահովումն այն անկյունաքարն է, որի վրա կառուցվում է առողջապահական համակարգը: 2001 թ.-ից ՀՀ-ում դադարեցվեց բժիշկների լիցենզավորումը և դրան համարժեք որևէ մեխանիզմ չներդրվեց: Ներկայումս բոլոր տեսակի բժշկական գործունեության համար պահանջվում է բժիշկ՝ համապատասխան հետբուհական կրթության և վերջին 5 տարվա ընթացքում վերապատրաստման առկայությամբ և միջին բուժաշխատող՝ միջնակարգ մասնագիտական կրթությամբ:

Յուրաքանչյուր լիցենզավորվող տեսակի համար համապատասխան որոշումներով սահմանված են անհրաժեշտ սարքավորումներ և պարագաներ: Բժշկագիտության զարգացման և նոր տեխնոլոգիաների ներդրման արդյունքում անհրաժեշտություն է առաջանում պարբերաբար թարմացնել պահանջվող սարքավորումների ցանկը, սակայն դա ոչ միշտ է իրականացվում: Բժշկական, ինչպես և այլ նշանակության սարքավորումները, անցնում են սերտիֆիկացում համապատասխան

պետական մարմնի կողմից, սակայն ներմուծման և վաճառքի առանձին գրանցում և հաշվառում չի իրականացվում:

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների իրականացման ժամանակ լիցենզավորված անձինք պարտավոր են պահպանել բնապահպանական, հիգիենիկ և սանիտարահամաճարակային անվտանգության, հակահրդեհային նորմերը և կանոնները:

Կառավարության որոշումներով սահմանված են նաև նվազագույն կառուցվածքային ստորաբաժանումների պահանջներ, որոնք պարտադիր են բոլոր կազմակերպությունների համար (օրինակ՝ վիրահատարանի հագեցվածության հետ պարտադիր է նաև վերակենդանացման բաժանմունքի առկայությունը, ցանկացած բժշկական օգնության տեսակ իրականացնող կազմակերպություն պետք է ներկայացնի նաև ախտահանման, միջամտությունների, մատենավարման և վիճակագրական կաբինետների հագեցվածություն և այլն):

Լիցենզավորման պարտադիր պահանջները և պայմանները

1. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների իրականացման ժամանակ լիցենզավորված անձինք պարտավոր են պահպանել իրավական ակտերով, այդ թվում՝ նաև լիցենզավորման կարգերով և միջազգային անվտանգության ապահովման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններով տվյալ գործունեության իրականացման համար նախատեսված պարտադիր պահանջները կամ պայմանները:

2. Բարդ լիցենզիան տրվում է լիցենզիա ստանալու համար սույն օրենքով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում, եթե օրենքով այլ ժամկետ նախատեսված չէ:

Եթե սույն մասում նշված ժամկետներում լիցենզիա ստանալու հայտը չի մերժվում, և հայտատուն օրենքով սահմանված կարգով և չափով վճարել է պետական տուրքը և վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացրել է լիցենզավորող մարմին, ապա հայտատուն համարվում է լիցենզավորված սույն մասում նշված ժամկետին հաջորդող 5-րդ աշխատանքային օրը և այդ օրվանից իրավունք ունի զբաղվելու տվյալ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով, իսկ լիցենզավորող մարմինը պարտավոր է սույն մասում նշված ժամկետին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուին տրամադրել լիցենզիա:

3. Լիցենզիա ստանալու հայտը մերժելու վերաբերյալ որոշման մեջ հստակ պետք է նշվեն մերժման պատճառներն ու իրավական հիմքերը:

4. Լիցենզիա ստանալու հայտում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակների, ոչ իրավաբանական անձտությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) առկայության դեպքում լիցենզավորող մարմինը հայտը կարող է բավարարել վերապահումով, որ լիցենզիան հայտատուին կտրվի դրանց վերացման դեպքում:

5. Փաստաթղթերը թերի լինելու հիմքով լիցենզիա ստանալու հայտը մերժվում է, եթե այդ մասին պատշաճ ձևով նախազգուշացումը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվանը հաջորդող 10 օրվա ընթացքում հայտատուն չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր:

Պարզ լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերը թերի լինելու վերաբերյալ լիցենզավորող մարմինը նախազգուշացումն ուղարկում է դրանք ստանալու օրվանից երեք օրվա, իսկ բարդ լիցենզիայի դեպքում՝ 10 օրվա ընթացքում:

6. Սույն հոդվածով չնախատեսված հիմքերով լիցենզիայի հայտի մերժումն արգելվում է:

7. Լիցենզիայի հայտի մերժման դեպքում հայտատուն իրավունք ունի լիցենզիա ստանալու նոր հայտ ներկայացնել ընդհանուր կարգով:

Լիցենզիայի հայտի մերժումը

1. Լիցենզիա ստանալու հայտը մերժվում է, եթե՝

1) դիմողի ներկայացրած փաստաթղթերը թերի են, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված.

2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն օրենքի և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին.

3) դիմող իրավաբանական անձն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվել հայցվող լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով.

4) դիմող ֆիզիկական անձն իրավունք չունի զբաղվել հայցվող լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով.

4.1) լիցենզիայի տրամադրումը հակասում է միջազգային անվտանգության ապահովման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին.

5) օրենքով կամ լիցենզավորման կարգերով նախատեսված են այլ դեպքեր:

Ելնելով վերոհիշյալից նպատակահարմար ենք գտնում առաջարկել և ներկայացնել ՀՀ առողջապահական համակարգում լիցենզավոր-

ման գործընթացի կազմակերպա-իրավական, կառուցվածքագործառնությային, մեթոդաբանական և ժամանակակից տեղեկատվական աշխատանքների ու մոտեցումների հետագա հնարավոր նորարարությունների և բարեփոխումների գիտական հիմնավորումներ: Նշված գործողությունների վերափոխումների արդյունքում կերաշխավորվի բնակչությանը մատուցվող բժշկական ծառայությունների որակի շարունակական բարելավումը:

ՀՀ գործող լիցենզավորման համակարգը նպաստում է քայլեր մշակել այն վերանայելու, որոշակի պահանջների և պայմանների առավել արդյունավետ վերափոխելու՝ հետագայում գործընթացը կատարելագործելու նպատակով:

Поступила 16.02.13

Основная информация о лицензировании системы здравоохранения Республики Армения

Д.Г. Думанян, А.В. Егиазарян, А.Ф. Согоян

Лицензирование системы здравоохранения является важным звеном в деле обеспечения безопасности и качества медицинских услуг.

Нами представлены основные цели и принципы лицензирования в сфере здравоохранения, необходимые условия и требования, предъявляемые к медицинским учреждениям с целью оказания качественной и доступной медицинской помощи населению. Проведен анализ лицензированных и действующих медицинских организаций, осуществляющих специализированную помощь по всем регионам РА.

Считаем целесообразным внедрение новейших организационных, информационных и методологических подходов с целью усовершенствования и непрерывного повышения качества лицензирования в здравоохранительной системе РА.

The main information on licensing of health system of the Republic of Armenia

D.H. Dumanyan, H.V. Yeghiazaryan, A.F. Soghoyan

Licensing of health care is an important tool to ensure the safety and quality of medical care.

The article presents the main objectives and principles of licensing in health care, the necessary conditions and requirements for health care facilities to provide qualified and accessible medical care to the population. There were

analyzed the current licensed health care organizations of all regions of Armenia.

We find it appropriate to introduce the innovative organizational, informational and methodological approaches with the aim to ensure the development and continuous improvement of the quality of health system licensing of RA.

Գրականություն

1. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք. Երևան, 2001թ.:
2. *Антимонов А.В.* Направления совершенствования правовых и организационных основ лицензирования медицинской деятельности. Самара, 2007.
3. *Лисицын Ю.П.* О научных основах стратегии медицины и здравоохранения. Общественное здоровье и здравоохранение, 2008, 3, с. 3-7.
4. *Максимов С.В.* Продление срока действия лицензии путем ее переоформления. Вестник Росздравнадзора, 2008, 5, с. 51-53.
5. *Хачатрян Т.С., Айрапетян М.Г.* Аккредитация и лицензирование – основа повышения качества медицинской помощи населению. Медицинский вестник “Эребуни”, 2004, 2 (18), с. 71-74.
6. *Saltman R.B.* Decentralization, Re-centralization and Future European Health Policy. European Journal of Public Health, 2008, 18(2), p. 104-106.
7. *Svorny S.* Medical Licensing: An Obstacle to Affordable, Quality Care. September 17, 2008 Policy Analysis.